ԴՊՐՈՑԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (SFSS)

ՀԱՏՈՒԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Դպրոցի և ընտանիքի աջակցության ծառայության զանգերի կենտրոնն աջակցում է LAUSD համայնքին և գործընկերներին՝ պատասխանելով հատուկ կրթությանը վերաբերող հարցերին, մտահոգություններին և բողոքներին: Իրենց գործին նվիրված մեր անձնակազմն ուսումնասիրում է առկա խնդիրները, իրականացնում է խնդիրների լուծում ճիշտ ժամանակին և ուղղորդում և աջակցում է աշակերտներին, ընտանիքներին և մանկավարժներին: SFSS անձնակազմը ապահովում է քաղաքականության, ընթացակարգերի և գործելակերպի համապատասխանությունը դաշնային և նահանգային օրենքների հետ՝ վերահսկելով անհատական կրթական ծրագրի (IEP) իրականացումը, հեշտացնելով ռեսուրսների և ծառայությունների հասանելիությունը և խթանելով հավասար հնարավորություններ հաշմանդամություն ունեցող աշակերտների համար:

ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՊՎԵԼ ՄԵԶ ՀԵՏ

Աշխատանքային ժամեր
Երկուշաբթի – Ուրբաթ
7:00 – 17:00

Գրասենյակի հեռախոս՝ (213) 241-6701
TTY՝ (213) 241-2511
Ֆաքս՝ (213) 339-2684

Էլ. հասցե՝ spedsfss@lausd.net
Վեբկայք՝ https://sped.lausd.org

SFSS-ը դպրոցներին և ընտանիքներին աջակցում է հետևյալ կերպ.

- Անհատական կրթական ծրագրերին (IEP) առնչվող հարցերին արագ արձագանքում և խնդրահարույց հարցերի լուծում:
- Ծնողի/խնամակալի ներգրավվածությունը խթանող ռեսուրսների տրամադրում, ինչպիսիք են՝ ծնողների համար նախատեսված աշխատաժողովները և համայնքային խորհրդատվական կոմիտեի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Հատուկ կրթության ոլորտում հնարավոր խախտումների վերաբերյալ բողոքների քննություն, և հարցերի՝ ժամանակին իրականացվող պարզեցված լուծումներ:
- Իրազեկում տրանսպորտի, երկարացված ուսումնական տարվա (ESY), լրացուցիչ ուսուցման, ձմեռային դասընթացների և այլ հարցերի վերաբերյալ: